



271.15  
2-20

493

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽՐԱԳԻՒԹ

ՄԻԼԻԹԵՐԱՅԻՆ

Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Դ Վ Ե Կ Ե Տ Ի Կ

Դ Վ Ե Կ Ե Տ Ի Կ Ա Ր Ա Յ Ա Ր Ա Յ Ո Ւ :



ՏՊԱԳՐԵԱԼ, Դ Կ Ա Յ Ա Ն Կ Դ Ո Ւ :

ՀԱՄԿԵՐ

2004

1954-WR

ԿԵԼՅ-ԽՀ.



33800-65

# Ա Խ Ի Թ Ա Ր Ե Վ Ե Կ Ե

## ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՐՔ ՀԻՄՆԱԴՐԻ ՆՈՐԱ:

Հիմնադիր այսը ԱՌաբանութեան  
եղև Ախիթար Ա արդասկետ Պիտ-  
րոսեան՝ Հայ ազգաւ :

Օճաւ նա 'ի Աեքստափա քաղաքի  
Փոքուն Հայոց՝ յամի Տեառն 1676 :

'Ի մանկութեան անդ յանձնեալ  
ումեմն Քահանայի 'ի դաստիարակու-  
թիւն և յուսումն՝ Եցոյց զյառաջադի.  
մութիւն առաւել քան զչափ իւրոյ  
հասակի . զի քան 'ի մանկական խաղո՝

առաւել ինքնայորդոր բերիւր յուս  
մունս , 'ի կըթութիւն աստուածպաշ-  
տութեան , և բարի վարուց :

Յիններորդ ամի հասակին ցուցեալ  
զփափաք եկեղեցական վիճակի՝ ըն-  
կալաւ զորս փոքր աստիճանս կղերի-  
կոսաց : Խոկ 'ի հնդետասան ամաց հա-  
սակի եմուտ 'ի Ա անս առընթեր ԱԵ-  
բաստիոյ կոչեցեալ սուրբ 'Աշանի' առ  
'ի լինել անդ կրօնաւոր : Եւ Լնա-  
նիա Ապիսկոպոս առաջնորդ Ա անայն  
տեսեալ զկատարելութիւն հասակի ,  
և զզգօնութիւն մոտաց նորա՝ զդե-  
ցոյց նմա զսքեմն կրօնաւորական , և  
ձեռնադրեաց զնա Աարկաւագ յամին  
1691 :

Ուր առաւելեալ Ախիթարայ 'ի  
ջանս աստուածպաշտութեան և ուս-  
ման՝ ընթերցաւ բազում անդամմուա-  
դիր քննութեամբ զԱստուածաշունչ  
դիրս , և զայլ մատեանս՝ զորս եդիտ  
անդ . յորոց և բազում ինչ շտեմարա-

նեաց 'ի միտս իւր : Այւ յետ յօրինելոյ սմնդանօր զբանաստեղծութիւնս ինչ, և հոգեռոր քարոզս, և 'ի նոյն կըթելոյ զանձն առանձինն 'ի սենեկի, տեսեալ թէ ոչ կարէ անդ յառաջադէմ լինել 'ի բարձրագոյն ուսմունս՝ ել 'ի Ա անաց անտի և աշակերտեցաւ ումեմն վարդապետի յլջմիածնէ 'ի Կաթողիկոսական աթոռոյ Հայոց + որ և խոստացաւ տանել զնա անդը իբր 'ի Ճեմարան ամենայն գիտութեանց :

'Ի Ճանապարհին հասեալ նոցա 'ի Կարին քաղաք՝ ետես անդ Ա խիթար զառաջինն զոմն եւրոպացի Ա իսոնար + եհարց ցնա ըստ իւրումն հետաքնին բարուց բաղում ինչ վասն Ա րեմտեայց, և լուաւ 'ի նմանէ 'ի յորդոր սրտի իւրոյ :

Ա յւ իբրև չոգաւ ընդ Ա արդապետին յլջմիածն, չեղիտ անդ զփափաքելի Ճեմարանն զիտութեանց: Ա ասն

որոյ և ելեալանտի, և հրաժարեալյառ  
շակերտութենէ վարդապետին՝ գնաց  
'ի Ա անս կղզւոյն Աւանայ, զի թե-  
րես անդ գտցէ զուսումնարան։ Ա Յ Հ  
քանզի և անդ եղիտ յաւետ խստա-  
կրօն Ճգնութիւնս քան զուսմունս,  
վասն որոյ դարձաւ անդրէն 'ի քաղաք  
իւր 'ի Աւբաստիա :

Բայց զՃանապարհայն հասեալ 'ի  
վանս Բասենոյ մերձ 'ի Լարին՝ 'ի խնդ-  
րոյ առաջնորդի նորա՝ եկաց անդ առ-  
ժամանակ մի ուսուցիչ լինել մանկանց։

Օ կնի եօթնետասն ամսոց ելեալ  
անտի իբրև եկն 'ի Լարին, եղիտ անդ  
զոմն Հայաղգի նորոգ դարձեալ յա-  
րեւմտից որ և պատմեաց նմա բազում  
ինչ վասն Խւրոպացւոց։ Օ որ լուեալ  
Ախիթարայ՝ արծարծէր 'ի հոգի իւր,  
և մնայլ առթի անցանելոյ յարե-  
մուտս :

Ընթերցաւ 'ի տան անդ հայկաղուն  
Պարօնին զգիրս Աղեմայ Լալանոսին,

և բաղում ինչ քաղեաց 'ի նմանէ 'ի  
պէտու իւր :

Ասլա յամին 1695 հասեալ 'ի ԱԵ-  
բաստիա՝ չոգաւ վերստին 'ի վանս  
սուրբ Կշանի . և անդ ետ զանձն 'ի  
հանապազորդ ընթերցումն մատենից  
Հարց Հայոց , ևս և Յօւնաց և Ասոր-  
ւոց՝ որք թարգմանեալ կային յազդին  
Հայոց :

Այնչափ էր ուսումնասիրութիւն  
նորա , մինչեւ և 'ի Ճանապարհի նըս-  
տեալ 'ի վերայ գրաստու՝ ընթեռ-  
նոյր : Աշ ըթողոյր մատեան ինչ 'ի ձե-  
ռանէ , մինչեւ էր աւարտեալ զողջոյն  
վերծանութիւն նորա հանդերձ քըն-  
նութեամբ :

Աքար 'ի վանս անդ դարձեալ երգս  
ինչ հոգեորական . յորոց զոմանս ցարդ-  
երդեն Հայք յեկեղեցիս իւրեանց :

Այլ քանզի ունէր 'ի վանս անդ  
ցաւ սաստիկ աչաց , եկեալ 'ի տուն  
ծնողաց իւրոց առ 'ի դարման՝ ոչ

միայն սիրով համբերէը այսամ, այլև  
 'ի կուրութեան անդ իւրում՝ երբեմն  
 տայր այլոց ընթեռնուլ յունին նորա  
 զգիրս ոտանաւորաց՝ Աերսիսի Ալայեց-  
 ւոյն, և ինքն 'ի միտ առնոյր զայն  
 ըստ արագաշարժ իւրումն յիշողու-  
 թեան. և երբեմն ինքնին յօրինեալ  
 ոտանաւորս՝ տայր այլոց արձանացու-  
 ցանել 'ի գիր :

Քետ այնորիկ 'ի փարատիլ ցաւոց  
 աչաց իւրոց՝ փութայր նա գնալ յա-  
 րեւմուտս յուսումն : Ի՞այց յաւուրսն  
 յայնոսիկ քահանայ ոմն ուսումնասէր  
 եկեալ 'ի Աերաստիա՝ յորդոր լինէր  
 նմա գնալ ընդ իւր Այրուսաղէմ՝  
 առ 'ի պարապիլ անդ յուսմունս 'ի  
 միասին : Աւ Ախիթար հաջեցաւ ճա-  
 նապարհակից լինել նմա մինչե 'ի Աե-  
 րիա . զի ակն ունէր շրջել զմիտս նո-  
 րա զՃանապարհայն երթաւլ ընդ իւր  
 յաւէտ 'ի Հռովմ :

Դ ճանապարհի անդ՝ մինչդեռ ան-

յանելին նոքա Երիվարաւ ընդ գետ  
ինչ, մերձ 'ի Վալաթիա՝ հատաւ լար  
համետի գրաստուն Վիսիթարայ. յոր-  
ձանք ջուրց տարան զգրաստն, և ինքն  
մնաց համետիւն հանդերձ 'ի վերայ  
ջրոցն. և թէպէտ 'ի լեղ անկեալ  
զերծաւ, բայց պարկ նորա՝ յորում  
կային գրուածքն իւր, կորեաւ:

Հասեալ 'ի Ռերիա՝ եղիտ և անդ  
զիւրոպացի Վիսոնարս. յորոց միջի  
յաճախէր առ կրօնաւոր ոմն Յիսու-  
սեան՝ որ էր այր Երկիւզած, իմաս-  
տուն և հմուտ արեելեան լեզուաց:  
'Ի յայտնել նմա Վիսիթարայ զմիտս  
իւր գնալոյ յարեմուտս, տեսեալ նո-  
րա զըստ բաւականին ինքնաջան ու-  
սումն նորա, և զփոյթ լուսաւորելոյ  
զայլս՝ խրատ ետ նմա չմեկնիլ յերկ-  
րէ և յազգէ իւրմէ, յառաւելագոյն  
օդուտ աղգայնոց իւրոց: Ռայց քան-  
զի ոչ կարաց հաւանեցուցանել զՎի-  
թար, ետ 'ի ձեռս նորա զյանձնարա-

բական գիր յամին 1695. յորում զինի  
այլոց բանից՝ ասէ այսպէս . ” Եւ զի  
ամենալաւ պատանին վառեալ էր մե-  
ծապէս եռանդեամբ . . . . Եթէ յա-  
ղագս վարուցն անարատութեան , և  
առանձին բարեպաշտութեան , և եթէ  
վասն ուշիմամիտ բնաւորութեանն ,  
և հմտութեան գրոց Հարցն սրբոց  
Հայոց . . . ոչ կարացի չհաւանիլ ընդ  
խորհուրդն՝ զոր 'ի վաղուց յանձին  
կալու առ'ի երթալ 'ի Հռովմ“ :

Ելեալ անտի Վիսիթարայ ընդ ըն-  
կերի իւրում՝ զոր և համոզեալ էր  
արդէն գնալ ընդ իւր 'ի Հռովմ , եկն  
յլողեքսանդրիա . և անդ եմուտ 'ի  
նաւ ընդ նմա՝ գնալ յլուրոպա :

Բայց հասեալ նաւուն 'ի կիպրոս՝  
ըմբռնեցաւ Վիսիթար յախտ դժըն-  
դակ տենդի և դալկան , մինչեւ հարկ  
լինել նմա մեկնիլ 'ի Ճանապարհակ-  
ցութենէ ընկերին , և մնալ անդ հի-  
ւանդադին :

Ուր 'ի վանս ճգնաւորացն հայոց՝  
 'ի սաստկանալ անդ տապոյ ջերմանն,  
 ըմբռնեալ գողցես յանզգայութիւն՝  
 բազում անդամ արկաներ զանձն յա-  
 ւազան ջրոյ 'ի պարտիզի անդ՝ առ 'ի  
 զովացումն : Եւ կերակուր նորա ոչ  
 այլինչ էր, բայց սակաւ մի ձիթապը-  
 տուղ, և հաց գարեղեն :

Այլ 'ի մեղմանալ սակաւիկ մի հի-  
 ւանդութեան նորա խնամօք ուրումն  
 բարեպաշտի՝ կամեցաւ դառնալ 'ի  
 տուն ծնողաց իւրոց, առ 'ի դտանել  
 անդ զկարեւոր դարման առողջու-  
 թեան :

Եմուտ 'ի նաւ, և եկն 'ի Աելե-  
 կիա . և անտի ընդ ցամաք՝ հետիոտս  
 և մուրալով առ չքաւորութեան, ե-  
 հաս անդըն 'ի Բաերիա . ուր և այլք  
 յԵւրոպացւոց անտի հրաժարեցու-  
 ցեալ զնա 'ի գնալոյ յարեւմուտս, փու-  
 թացուցանեին դառնալ 'ի հայրենիս  
 իւր .

Չոգաւ անտի յլնթապ , և ընդ  
կարաւանին Եհաս 'ի Աթբաստիա յա-  
մին 1695. յանպատմելի ուրախութիւն  
ծնողաց իւրոց՝ որք համարէին զնա  
մեռեալ 'ի Ախալըռոս :

Եւ այնպէս 'ի տան իւրումգդտեալ  
զկարեւոր դարման՝ զկնի սակաւ ժա-  
մանակի ստացաւ զկատարեալ առող-  
ջութիւն . և զնաց դարձեալ 'ի վանս  
սօւրբ 'Աշանի' առ 'ի կալ անդ :

Ուր յայս նուագ բաց յայլոց գրա-  
ւոր աշխատասիրութեանց՝ վերածեաց  
յոտանաւոր բան զգիրս լուակացն Առ-  
զոմնինի' առ 'ի դիւրընկալ մտառու-  
թիւն մանկանց :

Իսայց մի ոմն յլթեղայից անտի մա-  
խացեալ ընդ նա՝ յաւուր միումգ գաղտ  
մտեալ 'ի սենեակ նորա՝ էառ զամե-  
նայն գրուածս նորա , և ընկէց 'ի  
հուը : Օ որ իմացեալ նորա՝ ոչ եղեւ  
վրէժինդիր , այլ համբեր սքանչելի  
որինակաւ :

ՅԵտ այսորիկ ստիպեալ՚ի վանականաց անտի , և յերևելեաց քաղաքին ԱԵբաստիոյ՝ յանձն էառ ձեռնադրիւ քահանայ յամին 1696. և յայնմհետէ կոչեցաւ Աբեղայ՝ ըստ սովորութեան ազգին Հայոց :

Եռայր այնուհետեւ հոգւով , և ջանայր լուսաւորել զազգ իւր ողջամիտ վարդապետութեամբ , կրթել բարեկրօն վարուք , և Շմարիտ աստուածապաշտութեամբ :

Եւ քանզի ինքնին չէր բաւական առ այս , խնդրեր գտանել իւր օգնականս : Ամին իրի՝ ի ձեռն քարոզութեան իւրոյ , և յաւետ նախանձելի օրինակաւ վարուց իւրոց՝ անդէն ՚ի ԱԵբաստիա քաղաքի ձգեաց յաշակերտութիւն իւր զերկուս պատանիս . այլ՝ ՚ի հակառակել ծնողաց նոցա՝ եթող զնոսա՝ ՚ի կամս ազատութեան իւրեանց , և դարձոյց անդրէն առ ծնողսն :

Յաւուրսն յայնոսիկ լուաւ Աշխե  
թար զհամբաւ իմաստութեան խա-  
չատրոյ վարդապետի կրթելոյ 'ի դըպ-  
րատան Հռովմայ, վասն որոյ և կա-  
մեցաւ գնալ առ նա 'ի Առատանդնու-  
պոլիս, առ 'ի ունել զնա իւր օգնական  
'ի լուսաւորութիւն ազգին Հայոց :

Եւ գնացեալ անդք յամին 1697.  
յաւուր միում յայտնեաց նմա զմիտս  
իւր կանգնելոյ Արքանութիւն ինչ  
ուսումնական . և յորդորէր զնա լի-  
նել առաջնորդ դործոյն : Բայց նա  
անդէն և անդ հրաժարեցաւ . զի բաց  
յայլոց ընդդիմութեանց՝ առաջի եղ  
Ախիթարայ և զկարեորութիւն բազ-  
մագումար դրամոց առ այն : Աակայն  
և այնպէս Ախիթար ստացաւ միւս  
ևս աշակերտ 'ի քաղաքի անդ :

Վասն որոյ զկնի դալոյ առ նա 'ի  
Առատանդնուպոլիս 'ի Աբաստիոյ միոյ  
յաշակերտաց անտի՝ յաղթեալ ընդ-  
դիմութեանց ծնողաց իւրոց , յուսա-

Հատեալ նորա 'ի Խաչատուը վարդապետէ՝ որոշեաց զմիաս իւր գնալ երկոքումք աշակերտօքն հանդերձ առայլ ոմն մեծանուն վարդապետ յիւխթեաց դաւառի՝ մերձ 'ի սահմանս Ալ բաց աշխարհին . զի թերևս նորին օդնականութեամք կարասցէ կանդնել զցանկացեալ Վիաբանութիւնն :

Եւ քանզի չունէր դրամն 'ի պաշար Ճանապարհի , շրջեցաւ յողորմութիւն 'ի կրպակս հացագործաց , և նոցին տրովք գնեաց զպէտս իւր , ևս և զիստուածաշունչ մատեան , և զայլ գըրեանս . և այնպէս աշակերտօքն հանդերձ եմուտ 'ի նաւ գնալ 'ի Տրապիդոն :

Յայս Ճանապարհորդութիւն՝ բաց 'ի ժանտախտէն որ կայր 'ի նաւի անդ , կրեաց նա և ալէկոծութիւն մեծ . զոր գեղեցիկ նկարագրեաց նայերդս իւր :

Այլ անվտանդ զերծեալ 'ի նաւա-

Հանդիստն Աքակելեայ՝ նաւեաց անտի  
 'ի Աինոպ, և անտի յԱմիսոս։ Եւ  
 անդ ելեալ 'ի ցամաք՝ ձանապարհ ա-  
 րար 'ի Ամարզուան։ և եհաս անգը-  
 յամին 1698. ուր և եկաց 'ի քարո-  
 զութիւն զձմեռն ողջոյն, և ապա չո-  
 դաւ յԱմասիա։ Քայսոսիկ Երկոսին  
 քաղաքս աղաչէին զնա ժողովուրդքն  
 մնալ առ ինքեանս 'ի քարոզութիւն  
 միշտ, բայց նա դիտելով զընդհանուր  
 օգուտ ազգին իւրոյ՝ 'ի հասանել դար-  
 նայնոյ՝ մեկնեցաւ անտի յԱրդոկիա։  
 և անդ յաւելեալ 'ի կարաւանն՝ դը-  
 նաց 'ի Կարին։

Իբրև եհաս անդը աշակերտօքն  
 հանդերձ, լուաւ անդ յանհնարին ցաւ  
 սրտի իւրոյ՝ զի դնացք մեծանուն վար-  
 դապետին յԱվսթեաց դաւառի՝ փո-  
 խեալ էին յառաջնոց անտի բարելա-  
 ւութեանց, վասն որոյ և շրջեալ ըգ-  
 միտս իւր՝ ուղղեցաւ աշակերտօքն հան-  
 դերձ առ առաջնորդն Կարմիր վանից՝

Վարդար եպիսկոպոս՝ որ էր այր ա-  
ռաքինի և ուսումնասէր. զի ցանկայը  
գլուխ զնաւ ունելիւր ձեռնտու 'ի գործ  
Վիաբանութեանն :

Բնկալաւ զնա առաջնորդն բաղում  
ուրախութեամբ . և տեսեալ զսքան-  
չելի վարս և զիմաստութիւն Այսիթա-  
րայ՝ նմա յանձնեաց զդաստիարակու-  
թիւն մանկանցն՝ որ ուսանէին 'ի  
վանս նորա : Եւ նա բաց 'ի մանկանց  
ուսուցանէր նաև զԱբեղայս վա-  
նացն , ընդ նոսին և զաշակերտս իւր ,  
բացատրելով նոցա զգիրս Աստուա-  
ծաբանութեան ԱԵծին Ալերտի՝ որ  
կայր թարգմանեալ 'ի հայ բարբառ :  
Բնդ արտաքին ուսման կըթեր զնոսա  
և 'ի վարս առաքինութեան և աստ-  
ուածպաշտութեան :

Ենդ հաւաքեաց 'ի մի զվկայու .  
թիւնս Եստուածաշունչ գրոց , և  
հարց սրբոց՝ զորս քաղեալ էր յա-  
ռաջադոյն 'ի պէտս քարոզի :



Անդ յաւուր միում՝ ի խօսել Այխի  
թարայ՝ ի վերայ բանից հաւատոյ՝ մի  
ոմն՝ ի հակառակորդաց անտի ընդ-  
դէմդարձաւ բանից նորա. և՝ ի յաղ-  
թահարել զնա վկայութեամբք նախ-  
նի վարդապետացն Հայոց, նա ինքն  
առաւել ևս զայրացեալ ե հար զերեսս  
նորա և վիրաւորեաց. բայց տեսեալ  
զնախանձելի համբերութիւնն Այխի  
թարայ՝ տեղի ետ շմարտութեանն :

Անկաւ՝ ի վանս անդ և ժանտախտ  
մահու, յորմէ և բազումք մեռան.  
բայց Այխիթար անվտանգ պահեալ  
Տերամբ՝ կամակար ցուցաներ զինամն  
իւր առ ամենեսին :

Յետ այսորիկ տեսեալ ամենեցուն  
զսքանչելի վարս նորա, և զկատարեալ  
իմաստութիւն՝ յորդոր լինեին նմա  
ընդունել զգաւազան Ա արդապետա-  
կան՝ իսատար հոգեսոր մշակութեանն.  
յաւետ իմն առաջնորդ վանացն ստի-  
պեր զնա : Եւ նորա ոչ կարացեալ

ընդդիմանալ կամաց նոցա՝ ընկալաւ  
զայն յամին 1699։ Առ յայնմէետե  
հրամանաւ Իւածնորդին երթայր 'ի  
քարոզութիւն 'ի սահմանս թեմի նո-  
րա՝ ունելով ընդ իւր զմի ոմն յաշա-  
կերտաց իւրոց։

Իպա ժամ բարեպատեհ գտեալ  
Վ'խիթարայ՝ յայտնեաց առաջնորդին  
զխորհուրդ իւր վասն հաստատելոյ  
գործակցութեամբ նորա զմիաբանու-  
թիւն ինչ ուսումնական՝ 'ի լուսաւո-  
րութիւն աղջի իւրեանց։ Իւայց և  
նա չեառ յանձն միաբանիլ ընդ նմա,  
երկուցեալ 'ի խռովութենէ հակա-  
ռակորդաց։ 'իմին իրի դարձեալ յու-  
սահատեալ Վ'խիթարայ՝ հաստա-  
տեաց զմիտս իւր դառնալ անդրէն 'ի  
կոստանդնուպոլիս. և անդ ժողովեալ  
'ի միումտան զաշակերտս 'ի կըթու-  
թիւն և յուսումն տալ ևս տպագրել  
նպաստիւք բարերարաց զպիտանի գը-  
րեանս. և այնպէս ըստ կարի 'ի գործ

ԴՆԵԼ ՊԴԻ ԽՏԱԸՆՐՈՒԹԻՒՆ Խւր լուսաւու-  
ՐԵԼՈՅ զազգն Հայոց :

Առաքեաց անդր յառաջագոյն զմի-  
ոմն յաշակերտաց իւրոց . և ինքն առ-  
եալ 'ի միջոյ մանկանց Կարմիր վա-  
նիցն զերկուս պատանիս հաւանու-  
թեամբ ծնողաց իւրեանց՝ եկն ընդ-  
երից աշակերտացն նախ 'ի Կարին , և  
եկաց անդ 'ի քարողութիւն ամիսս  
վեց՝ յօդուտ և 'ի շինութիւն քաղ-  
մաց . և ապա էանց 'ի Տրանդիզոն . և  
անտի մտեալ 'ի նաւ՝ եհաս 'ի Կոս-  
տանդնուպոլիս յամին 1700 :

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԱՑ

Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ :

Կալաւ անդ զառաջինն օթեանս  
'ի Կալաթա 'ի սենեակս եկեղեցւոյն  
Հայոց՝ որ կոչի սրբոյն Գրիգորի լու-  
սաւորչի . և քարողէր անդ , և պաշ-

տէր ևս զիսորհութոյ յեկեղեցիս | ա-  
տինացւոց :

Յաւուրսն յայնոսիկ յարեաւ խոռո-  
վութիւն մեծ՝ ի մէջ երկոցունց կող-  
մանց Հայոց, և Միսիթար բազում  
ջանիւ և իմաստութեամք խաղաղա-  
ցոյց զնոսա :

Տեսեալ ապա զբազմանալ աշակեր-  
տաց իւրոց՝ յաւուր միում կոչեաց ըզ-  
նոսա առանձինն, և յայտնեաց նոցա  
զիսորհութոյ իւր՝ ի լուսաւորութիւն  
ազգի իւրոյ : Եւ ապա առ՝ ի չերեխիւ  
առ նմա բազմութեան՝ ի քաղաքի  
անդ՝ զքահանայս և զվարդապետս՝ ի  
նոցանէ առաքեաց՝ ի քարոզութիւն  
յայլեայլ քաղաքս Հայաստան աշ-  
խարհի . իսկ զու քահանայս ժողովեալ  
՚ի սենեակս եկեղեցւոյն՝ կրթեր փու-  
թաջան :

՚Ինմին ամի զառաջինն ձեռն էարկ  
նա՝ ի տպագրութիւն գրոց՝ որ էր մի  
՚ի նալաստից լուսաւորութեան ազգի

իւրոյ • զառաջինն ետ տպագրել ըզ-  
գիրս իմավմայի Գևմբացւոյ՝ ի պէտս  
հոդեոր կրթութեան աշակերտաց իւ-  
րոց, և ապա զայլ կարեոր գրեանս :

Եթա այնորիկ կամեցեալ ԱՄիթա-  
րայ ըստ օրինի կրթել զաշակերտս  
իւր յուսումն և յաստուածպաշտու-  
թիւն՝ դիմեաց նախ բազում խնդըր-  
ուածովք առ Աստուած, և ապա կա-  
լեալ՝ ի Պէյօղլու տուն մի վայելուչ  
'ի վարձու, և անդ պատրաստեալ ըզ-  
գործիս գրակազմութեան՝ ժողովեաց  
անդը զմիաբանեալսն ընդ իւր յամին  
1701. և սկսաւ ուսուցանել և մար-  
զել զնոսա ընդ պատրուակաւ գրա-  
կազմութեան, զի վիճակ տէրութեանն  
և ազգի իւրոյ ըթողոյր նմա այլազգ  
ինչ առնել :

Եւ թէպէտ բազում զգուշու-  
թեամբ վարէր նա, սակայն ոչ կարաց  
ընդերկար պահել՝ ի տան անդ զաշա-  
կերտս իւր. քանզի՝ ի բորբոքիլ վե-

ըստին աղքային հալածանաց՝ հակա-  
ռակորդքն խնդրեին ունել զնա, և  
դնել՝ ի ծառայութիւն Ծիոյ ։ Ի այց  
նորա իմացեալ զայն յառաջագոյն՝ ա-  
պահովացոյց նախ զիւրսն, և ապա  
ինքն փախուցեալ յապարանս դեսպա-  
նին Պաղպիացւոց՝ անկաւ ընդ հովա-  
նաւորութեամբ նորա ։

Տեսեալ ապա՝ Ծէ հրդեհ հալա-  
ծանացն օր քան զօր Ճարակի ընդ ա-  
մենայն սահմանս տէրութեանն, գը-  
րեաց առ իւրսն արտաքոյ, և կոչեաց  
զնոսա առ ինքն ՚ի Առստանդնուպո-  
լիս . զի խորհէր յայլ կողմն աշխարհի  
փոխել զմիաբանեալսն ընդ իւր՝ տու՝ ի  
ապահովս առնել զնոսա յերեսաց հա-  
կառակորդաց . քանզի փորձիւ տեսա-  
նէր, Ծէ անհնար էր նմա կանգնել  
միաբանութիւն ինչ ուսումնական յայ-  
նոսիկ կողմանս :

Ո՞ինչդեռ Ծագուցեալ կայր նա ՚ի  
վանս Պարուցինաց ընդ պաշտպանու-

թեամբ Դաեսպանին , լուաւ՝ ի վաճառականաց անտի զարգաւանդահող և զքաջառողջ լինել երկրին Աօռայու՞ո՞ը էր յայնժամ ընդ վենէտկեան Հասարակապետութեամբ : Դա համբաւոյ աստի շարժեաւ Ախիթարայ՝ ժողովեաց զիւրսն՝ ի վանս Դաաբուչինաց՝ ի սենեակ իւր . ծանոյց նոցա վերստին զվախճան Ախաբանութեան իւրոյ , և առաջարկեաց նոցա ընտրել զայլ կողմն աշխարհի քաջադէպ առ այն :

Օ կնի բազում խորհրդոց՝ հաստատեցին նախ փոխադրիւ ընդ տէրութեամբ Վրիստոնէից , և ապա ընտրեցին զԱօռա վասն մերձակայութեան , և վասն դիւրագին լինելոյ՝ ի նման ամենայն պիտոյից՝ ի դարման կենաց : Ուր և կացուցին զԱխիթարա առաջնորդ իւրեանց , և նուիրեցին զանձինս յորդէգրութիւն սրբոյ Աստուածածնի , և եղին կնիք Ախաբանութեան իւրեանց զչորեսին տառքս

Ա, Կ, Վ, Ռ, Ռ. որք են սկզբնատառք  
բառիցս Որդեգիր կուսի Վարդապետ  
Վաղաշխարութեան :

Այս հաստատութիւն Մխիթար-  
էան Մխարանութեան եղե 'ի Ծե-  
րա կոստանդնուպոլսոյ յամին 1701.  
յամսեանն Աեպտեմբերի : Եւ միա-  
բանեալքն էին այսոքիկ . Մխիթար  
վարդապետ Աեքաստացի, Եղիա վար-  
դապետ կոստանդնուպոլսեցի, Յով-  
հաննէս վարդապետ Աեքաստացի,  
Գևորգ վարդապետ Վնթապցի, Մա-  
նուել վարդապետ կոստանդնուպոլ-  
սեցի, Պազար Վկնեցի, Յովհան-  
նէս Աեքաստացի, Վզարիա կոստանդ-  
նուպոլսեցի, Գաբրիէլ կարնեցի, և  
Միքայէլ Աեքաստացի :

Մ Տ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն . Մ Խ Ւ Թ Ա Ր Ա Ց  
Դ Մ Օ Ռ Ա :

Յետ այսորիկ առաքեաց | | Եխիթար  
գիւհորդ վարդասկետ 'ի | | Յօռա առ 'ի  
զննել զհանգամանս երկրին: Լացեալ  
նորա անդ ամիսս երիս՝ ծանոյց | | Եխի-  
թարայ զկարեոր տեղեկութիւնս :  
Եւ նորա փութացեալ՝ առաքեաց  
անդը յառաջագոյն զվեց անձինս, ընդ  
որս և զԱպիսկոպոս ոմն հայազգի՝ որ  
յարեցաւ յայնժամ'ի միաբանութիւն  
իւր առ 'ի ձեռնադրել զքահանայս  
նորա :

Իբրև այն ինչ հանդերձեալ էր և  
ինքն | | Եխիթար մնացելովքն հանդերձ  
ելանել 'ի Ճանապարհ, վերստին ջա-  
նային հակառակորդքն 'ի ձեռս բե-  
րել զնա: և զի յայն սակս հարկ եղեւ  
նմա ելանել 'ի վանացն Պաքուզինաց,  
փութացեալ թագեաւ յայլ տուն: և

անդուստ վերստին առաքեաց զոմանս  
յաշակերտաց իւրոց 'ի Առօռա : Եւ  
ապայետ աւուրոց ինքն մտեալ 'ի ըգ-  
գեստ վաճառականի՝ ընդ երից յա-  
շակերտացն զերծոյց զանձն'ի Օ միւռ-  
նիա :

Յելանել իւրում 'ի Առստանդնու-  
պոլսոյ՝ ուներ Ախիթար չորեքհարիւր  
դահեկան ևեթ 'ի ձեռին, և ինքն  
երթայր յաշխարհօտար կանդնելանդ-  
զԱխաբանութիւն, որ ապաքէն մարդ-  
կօրէն մտածեալ՝ յանհնարիցն էր :

'Ի հասանել իւրում 'ի Օ միւռ-  
նիա՝ լուաւ թէ հրովարտակ արքունի  
եկեալ է այդը առ 'ի ունել զնա . նմին  
իրի և անդ առջապարեալ փախեաւ 'ի  
վանս Յիսուսեանց : Եւ այնպէս ապա  
դտեալ նաւ մի՝ որ երթայր 'ի Ա էնե-  
տիկ, եմուտ 'ի նա, և զերծոյց զանձն  
'ի Օ անթա յամին. 1702. զինի մեծի  
ալէկոծութեանն՝ զոր դարձեալ նկա-  
քագրեաց նա յերգս իւր :

Տեսեալ անդ զբարեխառնութիւն  
օդոյն Օ անթայի , զքաջաբերութիւն  
երկրինորա , և զդիւրագնութիւն վա-  
ճառացն 'ի նմա , և զանձն յապահո-  
վի , հաճեցաւ յոյժ ընդ կղզին : Ի՞այց  
գրեալ ծանոյց իւրայոցն զհասանել  
իւր 'ի Օ անթա , և խնդրեաց 'ի նո-  
ցանէ վերստին տեղեկութիւն վասն  
Մօռայի . զի կամէր զպատշաճադոյնն  
յերկոցունց անտի ընտրել . Եւ նո-  
քա առաքեցին առ նա զոմն պատմել  
նմա բանիւ բերանոյ զհանգամանս  
Մօռայու , և զայն ևս՝ թէ զիարդ  
իշխանք երկրին առ 'ի բազմացուցա-  
նել զբնակիչս իւրեանց՝ կամին ձըի  
տալ նոցա գեօղս և ագարակս յեկա-  
մուտ Միաբանութեան իւրեանց :

Օ այն իբրև լուաւ Միիթար , ան-  
յապաղէանց 'ի Օ անթայէ 'ի Եւա-  
սլոլիս մայրաքաղաք Մօռայու յամին  
1703 . ուր ողջամբ դտեալ զիւրսն  
վեշտասան թուով , և դոչայեալ

զԱստուծոյ՝ կալաւ տուն մի ՚ի վար-  
ձու , և անդ մակաղեցոյց զփռքըիկ  
հօտ իւր։

Յետ այսորիկ խորհուրդ արարեալ  
ընդ միաբանից իւրոց վասն շինու-  
թեան մենաստանի անդանօր՝ ընտրե-  
ցին զԱԵթոն բերդաքաղաք՝ ՚ի սակա  
հաստակառոյց ամրութեան նորա , և  
բազմամարդն լինելոյ : Ա ասն որոյ ընդ  
յանձնաբարական թղթոյ գեսպանին  
Ա ենէտկեցւոց՝ զոր առեալէին ՚ի Առո-  
տանդնուպոլիս , մատուցին գիր ա-  
զերսանաց առ կառավար իշխանս ԱՌո-  
ռայու վասն այսր : Եւ նոքա յօժա-  
րակամ չնորհեցին նոցա տեղի շինու-  
թեան մենաստանի և եկեղեցւոյ ՚ի  
ԱԵթոն , ընդ նմին և երկուս գիւղա՝  
յեկամուտ պարենի իւրեանց , բայց  
պայմանադրութեամբ՝ զի յերիս ամս  
կատարեսցեն զշինուածն : Ետուն ըզ-  
մուրհակն հաստատութեան ՚ի ձեռս  
Ա խիթարայ , և ծանուցին ևս գաւաւ-

ռապետին տալ ԱՌխիթարեանց'ի ԱՌԵ-  
Թոն քաղաքի անդ զտուն մի յառժա-  
մանակեայ բնակութիւն՝ մինչև ցա-  
ւարտումն շինուածոյ իւրեանց :

Եկեալ ապա ԱՌխիթարայ 'ի ԱՌԵ-  
Թոն իւրայովքն հանդերձ բնակեցոյց  
զնոսա 'ի տան անդ տուեալ յարքու-  
նուստ :

Ուր ըստ կարի եղեալ 'ի կարգի  
զամենայն, մինչև էր ձեռնարկեալ  
'ի շինութիւն ԱՌԵնաստանին՝ առա-  
քեաց զերկուս յաշակերտաց անտի  
Շաղիա և զՅովհաննէս վարդապետու-  
'ի Հռովմառ Ալղեմէս ժա ։ հանդերձ  
համառօտսահմանադրութեամբք միաւ  
բանութեան իւրոյ ընդ կանոնօք սրբ-  
բոյն Անտոնի Աքբայի, առ 'ի ընդու-  
նել զհաստատութիւն յԱռաքելական  
աթոռոյ :

Իայց տեսեալ զյամենալ խնդրոյն՝  
զմին միայն յաշակերտացն եթող 'ի  
Հռովմ, պատուեր տուեալ նմա ու-

սանել զ] ատին և զ] ատալական բար-  
բառս՝ 'ի նպաստ լուսաւորութեան  
աղգին . քանզի և ինքն ոչ սակաւ տե-  
ղեակ էր յսյնժամ այնոցիկ լեզուաց  
ընդ հունականին . յորս զկնի առա-  
ւել ևս վարժեալ թարգմանեաց գիրս  
'ի նոցանե՛ 'ի հայ բարբառ :

Այլ իբրև լրանսցին երեք ամք ժա-  
մադրութեանն , և ինքն առ չքաւո-  
րութեանն անկարանայր ձեռն արկա-  
նել 'ի շինութիւն , ստիպեցաւ առ-  
նուլ դրամն յայլոց տոկոսեօք , և վա-  
ճառել ևս զբերս գիւղից երկուց ա-  
մաց միանգամայն . և այնպէս շինեաց  
զմի կողմն մենաստանին վայելու և  
չափաւոր , ըստ գաղափարին զոր ինքն  
հնարեալ էր , գոլով ևս վերակացու  
անձամք 'ի վերայ գործաւորաց . և  
ըստ պայմանին եմոյծ զիւրսն անդը :

Այլ քանզի անձկութիւն յետին  
աղքատութեան բռնացեալ էր 'ի վե-  
րայ նորա , իբրև յայն սահման եհաս'

մինչև չկարել և հաց անդամ ջամբել  
իւրայոցն , դիմեաց առ հարկի առ իշ-  
խանն Ի՞նձէլո Լամօ առ'ի լինդրել 'ի  
նմանէ նպաստ ինչ ողորմութեան :  
Եւ նա ըստ իւրումն մարդասիրու-  
թեան հրամայեաց տալ նմա յարքու-  
նուստ ցորեան և պաքսիմատ ըստ ըա-  
ւականին :

Ի՞սյ յետին չքաւորութիւն միաբա-  
նութեանն Ախիթարայ ձգեցաւ իբր  
ամս երիս . թող զհիւանդութիւնն  
պատճառեալ 'ի նոսա յանսովոր օդոյ  
երկրին . յորում ժամանակի ոչ ոք 'ի  
միաբանից անտի տրտունջ կալաւ զնը-  
մանէ . այլ ամենեքին զուարթագին  
պարապէին յուսումն և 'ի կրթութիւն  
իւրեանց : Յետ այսորիկ 'ի խնամոց  
Տեառն ցողեցին տուրք ողորմութեան  
'ի վերայնորատունկ միաբանութեանն,  
քամնզի նա ինքն բարեպաշտ իշխանն  
Լամօ առաքեաց առ նու 'ի նպաստ հա-  
րիւր և յիսուն դահեկան . նոյնպէս և

ԱԵՐԱՍՏԻԱՆՈՍ ՈՅՈՀԵՆԻԿՈ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
 ՀՐԱՄԱՆԱՏԱՐ՝ ԵՐԿԵՐԻւր ՊԱՇԵԿԱՆ .  
 և ինքն ՈՒԽԻԹ-ԱՐ ԺՈՂՈՎԵ-ԱԳ 'Ի ՔԵ-  
 ՐՈԳ ՊԵՂԻԳՆ ՎԵՐՀԱՐԻւր ՊԱՇԵԿԱՆ :  
 ՈՐՈՎՔ զօրացեալ նորա՝ ձեռն էարկ  
 և 'Ի շինուած եկեղեցւոյն . զորոյ ըդ-  
 կիր և զքաք դարձեալ յարքունուստ  
 հրամայեաց մատակարարել աստուա-  
 ծասէր իշխանն Ամօ : Որ և 'Ի կա-  
 տարել ՈՒԽԻԹ-ԱՐԱՅ զհանդես հիմնար-  
 կութեան եկեղեցւոյն յամին 1708 ,  
 առաջիկայ դտաւ անդ մեծաշուք բազ-  
 մութեամք . և հրամայեաց զօրակա-  
 նացն արձակել զհրաղենս , և հնչե-  
 ցուցանել զգալարափոզ : Եւ ապա  
 իջեալ ընդ ՈՒԽԻԹ-ԱՐԱՅ 'Ի տեղի հի-  
 մանն՝ եղ ընդ նմա զառաջին վեմն :  
 Իսկ 'Ի մատչել ՈՒԽԻԹ-ԱՐԱՅ զինի  
 հանդերձ միաբանիւքն 'Ի շնորհակա-  
 լութիւն նմին՝ նա ինքն բարեպարիշտ  
 իշխանն եղ 'Ի ձեռս նորա քառասուն  
 ոսկի վենետիկեան 'Ի նպաստ շինու-

թեան նորակառոյց եկեղեցւոյն :

Ո՞ր եւ յետ այնորիկ յամենայն նուազի՝ յորժամ գայլը 'Ե Վ'եթոն, յայց ելանէր Վ'խիթարեանց, յորդորեալ 'ի նախանձելի վարուց նոցա :

'Ե յաճախել ասպա տրոց ողորմութեանց 'ի կողմանց կողմանց՝ ոչ միայն բովանդակեաց Վ'խիթար զվայելսակերտ շինութիւն եկեղեցւոյն, այլև ազատեալ յամենայն պարտուց՝ գնեաց զերկուս յարակից տունս, և քակեալ զնոսա՝ արար անջրապետութիւն ընդ մէջ մենաստանի իւրոյ, և տանց աշխարհականաց : Եշտ այնուհետեւ սկսու վանական կարգօք դաստիարակել զիւրսն : Յոյր սակու և ընտրեալզկանոնս սրբոյն Ծանեդիկտոսի 'ի սատար իւրումն Վ'իաբանութեան՝ ծանոյց դաշին Հոռովմայ : Ինդոք հաւանեալ նորա ետ Վ'խիթարայ զպատիւ Վ'քրայական : Ա ասն որոյ ենքն կոչեալ 'ի Հոռովմայ և զմիւս ա-

շակերտ իւր՝ թարդմանեաց ընդ նման  
՚ի հայ բարբառ զբովանդակութիւն  
Աստուածաբանութեան սրբոյն Յառվ-  
մայի Բգուինացւոյ , առ ՚ի լինել դա-  
ստատետր աշակերտաց իւրոց :

Այսկայն՝ ով աղետիցս , զկնի մնա-  
լոյ Վխիթարեան միաբանութեանն  
անդ ՚ի Վեթոն ամս երկոտատան , և  
աձելոյ անդ հանդերձ բազում ար-  
դեամբք և շինութեամբ ժողովը-  
դեանն՝ յարեաւ պատերազմն ընդ մէջ  
Հագարացւոց և Վենետիկեցւոց . և  
դիմեցին Հագարացիք անհամար բազ-  
մութեամբք ՚ի Վօռա՝ առնուլ զայն  
՚ի ձեռաց Վենետիկեցւոց : Յայնժամ  
յանհնարս մտեալ Վխիթարայ՝ ՚ի  
վախճանի բռնադատեցաւ թողուլ  
զՎօռա , և անցանել իւրովքն հան-  
դերձ ՚ի Վենետիկ՝ ՚ի մայրաքաղաք  
Հասարակապետութեանն : Եւ զի ոչ  
տային հրաման ամենեցուն մեկնելոյ  
անտի՝ խնդրեաց զայն վասն երկոտա-

սանից միայն : Եւ այնպէս բազում  
 ցաւովք և դառն արտասուօք թողեալ  
 զմնացեալսն 'ի ԱՅԵԹոն, և յանձն ա-  
 րարեալ զնոսա 'ի խնամն ԱՍՏՈՒԾՈՅ՝  
 եմուտ մետասանիւքն հանդերձ առ  
 հաղճեպ տագնապի 'ի նաւ մի խար-  
 խալեալ, և մեկնեցաւ անտի յամին  
 1715. և այս փոխադրութիւն դառ-  
 նագոյն ևս եղել նմաւ քան զառաջինն  
 'ի Կոստանդնուպոլսոյ : Աակայն եհաս  
 Տերամբ անվտանգ 'ի ԱԷՆԵՄԻԿՅամն-  
 եանն Ապրիլի : Եւ անդ 'ի լրանալ  
 քառասնորդական արգելանին՝ պատո-  
 պարեաց զիւրսն 'ի միում տան կա-  
 լեալ 'ի վարձու 'ի թաղի անդ կոչե-  
 ցեալ սրբոյն ԱՐԱԹԻՆՈՍԻ :

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԱՅ  
ԴԱԿԵՆԵՏԻԿ :

Ուր և անդէն՝ ի պէտս կարասեաց  
տանն, և զգեստուց Վիաբանիցն ծա-  
խեալ զերկերիւր և զյիսուն դահե-  
կանսն զորս բերեալ էր ընդ իւր, և  
աւելի ինչ ոչ ունէր, անկաւ դարձեալ  
ընդ պարտեօք հարիւր և յիսուն Տու-  
դաթից : Աակայն և այնպէս աներկ-  
բայ յուսացեալ՝ ի Տէր՝ մնայր ակն-  
կառոյց ելից պատերազմին Վօռայու :

Եւ ահա զկնի չորից սմաոց հասին  
առ նա երկուք ևս յիւրայոց անտի  
զերծեալք՝ ի Վեթոնէ յառնուլ անդ-  
մայրաքազաքին՝ Աէապոլսոյ՝ ի Ծառ-  
քաց անտի . և պատմեցին նմա զմահ  
հւրումն յաշակերտացն՝ զորս թողեալ  
էր՝ ի Վեթոն : Այլ զկնի սակաւ ա-  
ռուց լուաւ Վիսիթար յանհնարին  
ցաւ սրտի իւրոյ և զգոյժ առմանն

ՎԵՇԱՆԻ, և զգերիլ չորեցունց աշա-  
կերտաց իւրոց : Օ որս կալեալ թռուր-  
քաց՝ տարան 'ի կոստանդնուպոլիս և  
յլնդրիանուպոլիս, և վաճառեցին  
Վրիստոնէից : Եւ այնպէս ապա ա-  
զատութիւն գտեալ յետ ժամանա-  
կաց ողջանդամ հասին և նոքա 'ի Ա է-  
նէտիկ առ Վիսիթար առաջնորդ իւ-  
րեանց . որ և ոչ սակաւ սփոփեցաւ 'ի  
տառապանաց անտի իւրոց :

Յետ այնորիկ 'ի հատանիլ յուսոյ  
նորա 'ի ՎԵՇԱՆԻ՝ խորհուրդ կալաւ  
ընդ Վիաբանսն՝ ստանալ վանս 'ի քա-  
ղաքի անդ : Եւ քանզի ունէր 'ի ձե-  
ռին վկայական գիրս յիշխանացն Վո-  
ռայու՝ յորոց մի է և այս Ալօզիոսի  
Վօչէնիկեան . „Գոլով բնակեալ 'ի  
թագաւորութեանն Վօռայի 'ի մե-  
ծածախ մենաստանի զոր 'ի հիմանց  
ծանր ծախու կառուցեալ էր յարգոյ  
Հարց Հայոց Վիանձանց 'ի կարգե-  
սրբոյն Անտոնի Աքրայի՝ ընդ իմաս-

տուն և նախանձայոց տնտեսութեամբ  
 Գրերապատիւ Աքքայի Ոխիթարայ  
 Պէտրօսեան , Ետուն՝ որպէս ինքն՝  
 նոյնպէս և ամենեքին այնչափ բարի  
 օրինակ ջերմեռանդն պաշտամամբ Ե-  
 կեղեցւոյ իւրեանց , ընտիր և բարե-  
 կիր գնացիւք , և անարատ քաղաքա-  
 վարութեամբ , մինչև մեծապէս շինու-  
 թեան պատճառ լինել ժողովրդեանն ,  
 և ձգել յանձինս իւրեանց զհանրա-  
 կան յարդութիւն , և զբովանդակ ըշ-  
 հասարակաց հաճութիւն , և զսէր հա-  
 մօրէն հըամանատար իշխանաց + որպէս  
 զամենայն ժամանակս՝ յորս վարեցի  
 յԱրեւելս զպաշտօն ընդհանուր տըն-  
 տեսութեան ծովու , դէպ եղել ինձ  
 տեսանել հիացմամբ , և բարեհռչա-  
 կել զնոցայն բաղմարդ իւն նախանձ  
 փութոյ յԱստուածային պաշտամունս ,  
 ընդնմին և զյարգն՝ զօր ուներ զնո-  
 ցանէ , և ինձ յանձն առներ զնոսա-  
 տուանձին իմն հայրական սերն Գրե-

բապատիւ Անգեղոսի Գառլինեան  
Արքեպիսկոպոսին Կորնթոսի...՝ Եղի-  
սլես և այժմ՝ ի գտանիլ նոցա պատո-  
պարեալ՝ ի թագաւորեալ քաղաքիս  
՚ի սակս բազմաղէտ անցիցն Մօռայի,  
արդարացի իմն թուի ինձ տալ՝ ի ձեռու  
նոցա զայս թուղթ վկայութեան՝ ի  
նշանակ արդեանց իւրեանց,, :

Եւ միջնորդ կալեալ զլ ենէտկեան  
Վեպուհս ընդ որս ունէր Մխիթար  
ծանօթութիւն անդստին ՚ի Մօռայէ,  
մատոյց աղերսագիր Ծակակուտին  
վասն նորոդ մենաստանի։ Այլ քան-  
զի զայնու ժամանակաւ չէր օրէն նո-  
ցա ընդունել զայլ միաբանութիւն  
՚ի քաղաքի իւրեանց, առաջարկեցին  
Մխիթարայ այսպէս .,, Եթէ հա-  
ճիք արտաքոյ քաղաքիս ՚ի ցամաքա-  
կողման տէրութեանս ունել վանս ՚ի  
մշտնջենաւոր բնակութիւն ձեղ և յա-  
ջորդաց ձերոց, տամք հրաման ստա-  
նալ ուր և կամք իցեն ձեզ։ Խսկ Եթէ,

'ի քաղաքիս կամիցեք բնակիլ, չնոր-  
 հեմք միայն առ կենդանութեամք ձե-  
 րով առանց յաջորդութեան . որպէս  
 զի՝ 'ի պակասիլ ձեր ամենեցուն, մե-  
 նաստանն դարձի անդրէն առ տէրու-  
 թիւնն ,,: Ճայց Ախիթար և ոչ զմին  
 յառաջարկութեանցս կարէր յանձն  
 առնուլ . զի բնակեալ 'ի ցամաքի անդ-  
 քաղաքին՝ դժուարաւ կարէր դտանել  
 զայլուստ միաբանութեան իւրոյ. իսկ  
 վանս ստօնալ 'ի քաղաքի անդ առանց  
 յաջորդութեան՝ անօդուտ էր վախ-  
 ճանի միաբանութեան իւրոյ : Ա ան-  
 որոյ ամ մի աշխատ լեալ միջնորդու-  
 թեամք բարեկամաց իւրոց՝ 'ի վախ-  
 ճանի յամին 1717 . յամսեանն Աեպ-  
 տեմբերի ընկալաւ 'ի տէրութենէ ան-  
 տի 'ի մշտնջենաւոր բնակութիւն զշը-  
 ջակայ կղզին անուանեալ սրբոյն Պա-  
 ղարու : Օ որ զառաջինն Աւպերդոս  
 Աբբայն Շենեղիկտեան ետ 'ի պար-  
 գե Պետոնդի Փաօլինի կոչեցելոյ :

Խակ նա յամին 1182 կարգեաց զայս  
կղզի յանկելանոց բորոտաց 'ի քաղա-  
քին , և զեկեղեցին շինեաց յանուն  
սրբոյն ՚ Ա ևոնդեայ հայրապետին : Եւ-  
ապա 'ի նուազիլ բորոտաց 'ի քաղաքի  
անդ՝ դատաւորք անկելանոցաց կար-  
դեցին զայն յամին 1594 'ի պէտս մու-  
րացիկ աղքատաց 'ի քաղաքին : Բայց  
տեսեալ զինի , թէ չկարեն նոքա դը-  
տանել նսկաստս 'ի կղզւոջ անդ հեռի  
դոլով 'ի քաղաքէն , փոխադրեցին զնո-  
սա յանկելանոցն 'ի քաղաքի անդ կո-  
չեցեալ Ա ու ըողաց . որով և երկո-  
ցունց ևս անուն կոչեցաւ սուրբ ՚ Ա  
զար . և կղզին մնաց դատարկ և ան-  
խնամ :

՚ Ա մտանել Ա խիթարայ 'ի ժառան-  
դութիւն կղզւոյն փոքր ինչ պարտա-  
ւորութեամբ ամըստամէ՝ եղիտ անդ  
միայն զեկեղեցին հնացեալ , զբնակա-  
րանս ինչ խաթարեալս , և զերկուս  
ջրհորս հանդերձ պարտիզաւ :

Բայց մինչեւ եր ձեռն արկեալ 'ի  
շինութիւն կղզւոյն՝ ըստներելոյ քքա-  
ւորութեանն բաժանեաց զհին բնա-  
կարանսն 'ի փոքրիկ սենեակս յառժա-  
մանակեայ բնակութիւն աշակերտաց  
իւրոց : Եւ այնպէս զետեղեալ զնո-  
սա անդ յամին 1718. ինքն փութա-  
ցաւ գնալ 'ի Հոռովմ առ 'ի արդարա-  
ցուցանել զմիաբանութիւն իւր 'ի զըր-  
պարտութեանց չարախոսաց : Օ՞ք  
և քաջիկ կատարեալ նորա , և ընկա-  
լեալ ևս 'ի սուրբ Գյահեն իշխանու-  
թիւն առաքելոյ Ահսօնարս՝ գար-  
ձաւ անդրեն փութանակի 'ի Ա-  
նետիկ :

Եւ տպա ընդ ժամանակս ժամա-  
նակս օդնութիւն գտեալ 'ի բարերա-  
բաց ազգի իւրոյ՝ շինեաց զգեղեցիկ  
մենաստան իւր երկդստիկոնեան , բա-  
ժանեալ զայն 'ի քառակուսի բնակու-  
թիւն Ա արդարեաց , 'ի 'Յորլնծայ-  
արան տեղի կը թութեան պատանե-

կաց, և 'ի Ա պարժարան՝ դասատուն  
բարձրագոյն ուսմանց : 'Ի, որոգեաց և  
զհին եկեղեցին՝ կանդնեալ 'ի նմա  
զհինգ խորանս, հանդերձ հիմնարկու-  
թեամբ նորոգ զանդակատան : Ը ի-  
նեաց և սեղանսատուն գեղեցիկ և չա-  
փաւոր, և 'ի վերայ նորա գրատուն  
ըստ նմին համեմատութեան : Ուող և  
զայլ շինուածս . որք են առհասարակ  
ըստ ընտիր քմաց : Բավանդակն ծը-  
նունդ իւրումն մտաց, և արդիւնք  
անխօնջ վերակացութեան իւրոյ 'ի  
վերայ գործաւորաց :

Օ կնի համբուն աւարտման մենաս-  
տանիս՝ բազումք յեկելոց 'ի զնին, հա-  
ճեալ ընդ գեղեցկայարմար վայելու-  
թիւն նորա՝ յորդոր լինեին Վիսիթա-  
րայ կանդնել զարձան իւր յերևելի  
տեղւոջ ուրեք մենաստանին առ'ի յի-  
շատակ յետնոց . բայց նա առ'ի հա-  
ճել միայն զկամս նոցա՝ արձանագը-  
րեաց 'ի վերայ դրան սեղանսատանն

արտաքուստ զայս բան ՚ի հայ և՝ ի  
լատին բարբառ.

Ո՞ենաստանս այս ըստ բոլորին  
Շինեալ եղեւ ՚ի փառս Փրկչին,  
Յարբայութեան Աերաստացւոյ  
Ո՞խիթարայ Վարդապետին :

Fuit hoc Monasterium totum tem-  
pore Mechitar Petri ex Sebaste I.  
Abbatis extractum. An. 1740.

Եւ ապա զկնի բազմադիմի առաքի-  
նաջան գործոց, գրաւոր և գործնա-  
կան վաստակոց, և ընտիր հովուու-  
թեան ամս քառասուն և ինն, ըմբո-  
նեալ Ո՞խիթարայ յախտ դալկան և  
դժնդակ թանջի՛ որպէս երբեմն ՚ի  
Կիսլոս, յամին 1749. ՚ի 27 Ապրիլի,  
՚ի հասակի անդ եօթանսասուն և չորս  
տմաց՝ կնքեաց ցանկալի մահուամբ  
զբազմարդիւն կեանս իւր յանհարին  
սուգ իւրոց աշակերտաց, ևս և հա-  
մօրեն աղգայնոց իւրոց, և օտարաց.

և թաղեցաւ 'ի դասի անդ եկեղեց-  
ւոյն յիւրումն տապահնի պատրաստեալ  
յառաջագոյն։ Այս զկնի ամի աշա-  
կերտք նորա 'ի պատիւ Հօր իւրեանց  
փոխադրեցին զմարմին նորա 'ի նորա-  
կերտ տապահնն 'ի բեմի անդ եկեղեց-  
ւոյն։ և 'ի վերայ երկնագոյն մարմա-  
րիոնեայ կափարչի եղին զայս տապա-  
հնագիր։

Տաղան Անիկեարայ Ռաբունապետի

1749 • Ապր • 27 :

Քնար քերութ հոգետաւիդ  
Կերկուռ մատին աստուածաձիդ  
Ազդեալ Աերաստ մարզեն խաւիդ  
Ռակերտ Արթայ Լուսաշաւիդ  
Քատակ մարմնոյ կայտառ լուղիդ  
Անձառ անհաս խորոց բաւիդ  
Դամբարք շնորհաց գերշառաւիդ  
Քայտիչ լուսոյ շըլաց շաւիդ  
Ռախճան դիտնոց իմաստ աննինջ

Ազգու ուսաւ ինքնին անջինջ  
խմբից ուսոյց բիւրուց առինչ  
( )ձան ոգւոց մըտաց շըտինչ  
Առփերս դրեաց յախտէ ոչինչ  
Առքանաղեան տոհմիս սատրինջ  
Այթաք չարին դուոց կըուինչ  
Տարաւ անբաւ իբրև զերինջ  
Որով հաստեաց կարգ հոմաշունչ  
Խիւսեալ Տերամք իբր ոսկեփունջ  
Ակումք կացոյց դպրաց մըմունջ  
Օաղիկ վարուց քարոզ անշունչ  
Արփւոյն մարզե մտիցն 'ի քունջ  
Յղկեալ դարաստ տնկեաց 'ի յունջ  
Խւրայօրէն նախ վանըս ջունջ  
Աիւթեաց նարօտ կարգիս 'ի փունջ  
Հագագ հովուիս ախտից ցըրօն  
Ոխորտ հնչէր մեղկից կըրօն  
Գառշար մտաց խոնարհ սիդնօն  
Խիւծեալ ոգւոց գեր Արքանօն  
Աղոք յախտին դաղթէլլէ Երշտօն  
Յասպիսն Հայոց արժամթէլլէ տօն  
Եռւադ ոսկի ընծայ 'ի ձքժան  
'ի ձօն

Օ որոյ և զկատարեալ կենդանա-  
գիր նկարեալ յառաջագոյն՝ պահեն  
նոքա 'ի սենեկի յաջորդ Աթբայիցն՝

Աշակերտք Ախիթմարայ առ կեն-  
դանութեամբ նորա 'ի քահանայական  
կարգէ եղեն յիսուն թուով. և յեղ-  
բայրական կարգէ իբր տասն. թողե-  
զայլ քառասունսն՝ զորս զկնի փորձոյ  
դարձոյց յետս :

### ԱՌԱՆՁԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ՝

Անդունէր Ախիթմար յաշակեր-  
տութիւն իւր միայն զհայկազուն ման-  
կունս. և առանց խտրելոյ ընդ աղ-  
քատ և ընդ մեծատուն՝ ընտրէր 'ի  
նոցանէ դեռաբոյս, ազնուաբարոյս,  
ուշիմս և անարատս :

Օ կնի փորձելոյ սակաւուք յառա-  
ջագոյն՝ զգեցուցանէր նոցա զգեստ  
սեաւ ըստ տարազու միաբանութեանն,

և այնպէս եղեալ զնոսա 'ի 'Ա'րըն-  
ծայարանի՝ յանձնէր զնոսա 'ի ձեռս  
վերակացուաց և վարժապետաց՝ 'ի  
կրթութիւն վարուց, և յուսումն գի-  
տութեանց՝ ընդ իւրով ընդհանուր  
կառավարութեամբ։

Օ կնի երկարաժամնակեայ փոր-  
ձոյ՝ եթէ գտանէր զնոսա առաքինիս,  
մտավարժս և քաջառողջս; ընդունէր  
զնոսա նախ 'ի նորընծայութիւն, և  
ապա՝ 'ի յանձն առնուլ պատանեացն  
ինքնակամ հաճութեամբ, նաև յուխտ  
միաբանութեան իւրոյ՝ քուէիւք հա-  
սարակաց։

Յետ այնորիկ անցուցաննէր զնոսա  
'ի Ա արժարանն՝ յուսումն բարձրա-  
գոյն գիտութեանց ընդ այլեայլ վար-  
ժապետօք։

Աւ զկնի աւաբտելոյ նոցա զամե-  
նայն ուսմունս՝ տայր ձեռնադրել զնո-  
սա Վահանայս։

Եր այնպէս ապա հանեալ զնոսա

'ի Ա արժարանեն՝ բնակեցուցաներ՝ ի  
սենեակս վարդապետաց: Այւ տուեալ  
ամենեցուն զգաւաղան Ա արդապետա-  
կան՝ առաքէր փոխանակաւ զոմանս  
'ի քարօզութիւն, և զոմանս կարգէր  
'ի գըաւոր վաստակս ՚ի մենաստանի  
անդ:

Օ օտարազգիս ոչ ընդուներ. զի  
վախճան միաբանութեան իւրոյ Եր լու-  
սաւորութիւն ազգին Հայոց, որում  
օտարք ոչ դիւրաւ կարէին ծառայել:

Խսկ զօրս յեկելոցն յազգէ իւրմէ  
գտաներ անընդունակս, կամ վաղվա-  
ղակի, և կամ զկնի առ ժամանակ մի  
կը թելոյ՝ դարձուցաներ՝ ՚ի հայրենիս:

՚Խսկանիլ մանկանց զուսումն՝ նախ  
մարզէր զնոսա՝ ՚ի քաջ վերծանութիւն  
դրոց, և յաւետ հայկազուն հեղինա-  
կաց. և ապա կարգաւ ուսուցաներ  
նոյա զքերականութիւն, զպատմու-  
թիւն, զաշխարհագրութիւն, զու-  
սումնականութիւն, զՃարտասանու-

թիւն, զբանաստեղծութիւն, զփելիսովայութիւն, և այլն. իսկ քահանայից նաև զաստուածաբանութիւն և զբարոյական :

Յաւարտել նոցա զմին՝ ի գիտութեանց աստի, քննութիւն արարեալ հանդիսիւ՝ պարզես բաշխէր քաջագիտացն :

Ինդ գիտութեանց աւանդէր նոցա և զուսումն լեզուաց. բայց յաւետ դիտէր քաջ կրթել զնոսա՝ ի հայկական բարբառ, յոյը սակս՝ ի կղզին սրբոյն ՚ աղարու առաւելապէս մշակեալ ծաղկի այս լեզու :

Յօրինեալ էր Ախիթարայ առանձին դասատետր վասն ամենայն ուսմանց, և զայն աւանդէր աշակերտաց իւրոց :

Այլ առանձին իմն փոյթ ուներ նակրթութեան նոցա յաստուածպաշտութեան անդ. նմին իրի ըստ սովորութեան ազգին Հայոց յառաւօտուն,

զհասարակաւուրք, և յերեկոյին ժողովեր զնոսա 'ի պաշտօն հասարակաց աղօթից : Ո՞իայն զմանկագոյն ուսանողս ազատ կացուցաներ յառաւօտեան աղօթից յեկեղեցւոջ անդ :

Այնպէս յամենայն կիւրակէս տայր մատուցանել ձայնաւոր պատարագ ըստ արարողութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ : Այլքանզի առանձին իմներ պարկեցտութիւն և ջերմեռանդութիւն Ո՞իաբանից նորա յայսոսիկ աստուածային պաշտամունս, նմին իրի նախանձելի լինէին նոքա և շինութեան պատճառ օտարաց՝ որ գային 'ի տեսութիւն :

Առաջին նպատակ մշտաջան խնամոց Ո՞իթարայ Եր կրթել զմանկունսն 'ի մատաղ հասակի անդ 'ի մարզ ամենայն առաքինութեանց . յոյը սակս և յօրինեալ կարգեաց նաերեսուն և երեք կանոնս վասն նոցագորոց զպահպանութիւն Տշդիւ պա-

Հանջեր՝ ՚ի նոյյանեւ հանապաղ :

Յաւուրս կիւրակելից առանձին իմն  
կըթեր զնոսա յուսումն քրիստոնեա-  
կան վարդապետութեան , և ՚ի պատ-  
մութիւն Աստուածաշունչ գրոց :

՚Ի սեղանատան անդ ՚ի ժամ Ճա-  
շակելոյ տայր ընթեռնուլ զգիրս , և  
չտայր ումեք խօսել . վասն որոյ և ար-  
ձանագրեաց ՚ի վերայդ բան զայս բան :

Աստ լուսութիւն է պահելի ,  
Եւ սռերք գրոց ուշ զնելի :

Որ և առանց մասնաւոր խստու-  
թեան պահոց՝ տայր աշակերտաց իւ-  
րոց բաց ՚ի նախաճաշկե՝ և Ճաշ և  
ընթրիս երկտեսակ , և երբեմն եռա-  
տեսակ . թող զպանիր և զպտուղ :  
Օդինին տայր մանկանց միայն յա-  
ւուրս տօնից :

Աչ զոքյաշակերտաց իւրոց թողոյը  
երթաւ՝ ՚ի քաղաքն կամ այլուր առանց  
հրամանի իւրոյ . ՚ի գալ օտարականաց

'ի տեսութիւն վանաց իւրոց՝ տայլը  
ոմանց յաշակերտացն շրջեցուցանել  
զնոսա , և յուղարկել մեծարանօք :  
Այնչափ էր պարկեշտութիւն աշա-  
կերտաց նորա , ընդ նմին և հիւրա-  
սեր ընդունելութիւն օտարականաց ,  
մինչև ակամայ մեկնիւնոցա 'ի վանաց  
անտի :

Ընդ սիրալի կրթութեան՝ տայլը  
Վիսիթար և ժամանակ զբօսանաց իւ-  
րոց աշակերտաց : Ոստ եօթն ժամուց  
ուսման յաւուրն՝ տայլը նոցա նոյնչափ  
ժամանակ քնոյ . յամարայնի յաւելոյը  
և ժամ մի 'ի ցերեկի : Օկնի ձաշրւ  
և ընթրեաց՝ մի մի ժամ խօսակցելոյ  
ընդ միմեանս . նոյնպէս և յառաջքան  
զմտանել արեգական ժամ մի առ 'ի  
շրջել 'ի պարտիզի . յորում պահու  
տայլը մանկանցն խաղալ 'ի միասին  
առ 'ի ունել զշարժումն :

Տանէր ևս զնոսա յամին միանգամ  
'ի գիւղ իբր աւուրս քառասուն 'ի

պատճառս օդափոխութեան . և անդ  
պարապումն տայը նոցա յուսմանէ :  
‘Եղնալէս և աւուրս հնդետասան ’ի  
ժամանակս Բարեկենդանի . յորում  
տայը մանկանց ձեւացուցանել զթատ-  
րոնական խաղարկութիւնս : Տայը և  
եօթնեակ մի սլարապոյ յառաջ քան  
զծնունդն՝ Քրիստոսի :

Բաց ’ի սլարապութեանց աստի և  
’ի զրօսանաց՝ առաքէր նա երբեմն ըզ-  
մանկունսն և ’ի քաղաք անդը ’ի տե-  
սութիւն հոգեւոր հանդիսից . և բա-  
զում անդամ ’ի շրջակայ եզր ծովուն  
առ ’ի խաղալ անդ , և շրջիւ ’ի զրօ-  
սանս :

Խոկ զլլ արդապետ աշակերտս իւր  
առաքէր նա ’ի քարոզութիւն յաւետ  
’ի կոստանդնուպոլիս , յԱնատոլիա ,  
’ի Հայաստան , ’ի Վիրս , ’ի Պարսկաս-  
տան , ևս և մինչեւ ’ի Հնդիկս . որք և  
բազմապատիկ ուղղութիւնս և ար-  
դիւնս ցուցին ’ի դաւառսն յայնոսիկ

բանիւ և օրինակաւ իւրեանց :

Առաքեաց նա և զոմանս յաշակերտաց իւրոց՝ ի Դրանսիլվանիա և՝ ի Հունգարիա՝ առ՝ ի ժողովրդապետութիւն, և՝ ի դաստիարակութիւն մանկանց գաղթականացն հայոց. ուր՝ ի Պաշպալով և՝ ի Ճեղըովարատին քաղաքսն ստայան նոքա առանձին փոքրիկ վանս և եկեղեցի :

Որպէս և՝ ի Վէնէտիկ քաղաքի կարգեաց նա զոմն յաշակերտաց իւրոց հոգաբարձու եկեղեցւոյն հայոց. և զայլ ոմն թոշակօք տէրութեանն ՚ի վերայ եկեղեցւոյն արգելանոցի ժանտախտին՝ վասն քաջագէտն լինելոյ իւրոցն արևելեան լեզուաց : Եւ ցարդվարեն նոքա զայսոսիկ պաշտամունս յաջորդաբար :

Օ կնի ստանալոյ Վիսիթարայ զերիս տեսակս հայկական նշանագրաց յիմնդրտամքաղաքէ՝ ՚ի ժամանակի անդ յոդնախուռոն զբաղանաց շինու .

թեան և կառավարութեան մենաստանի իւրոյ , ևս և դասատուութեան աշակերտաց իւրոց՝ շարագրեաց նա , և կամ տպագրութեամբ 'ի լոյս ընծայեաց զբաղմապատիկ գրեանս (ա) :

Այլ երեւելի եղեն յոյժ և բազմաշխատ 'ի գրաւոր վաստակս նորաերեքին այսոքիկ : Առաջին՝ մեկնութիւն Աւետարանին Աատթեի . գործընդարձակ , ընտիր և օդտակար . յորոյ 'ի տպագրութեան սակս յամին 1757 . ետ նա յօրինել նոր տեսակ հայկական գրոց : Երկրորդ՝ ընդարձակ բառարան լեզուին հայոց . զորդառաջինն շարագրեալ տպագրեաց նա յամին 1744 : Երրորդ՝ ընտիր և պատկերագարդ տպագրութիւն Աստուածաշնչին հայոց . զոր 'ի լոյս ընծայեաց յամին 1755 : Օրոյ զմի ռինակ առաքեալ 'ի պարդե Վահանայտապետին հռովմայ Իւենեղիկտոսի ժեկ . ընկալաւ 'ի նմանէ զայս գեր

Երախտապարտ շնորհակալութեան :

„ Իւենեղիկտոս քահանայապետ  
ժի : Աիրելի որդւոյ մերում ողջոյն և  
Առաքելական օրհնութիւն : - Երեկ  
ընկալաք ձեռամբ դիւանադպրի ժողո-  
վոյն Տարածման հաւատոյ զարժանա-  
ւոր ընծայն զկարի հաճելին մեզ զԱռ-  
տուածաշունչ մատեանն Հայոց , յոյը  
ուակս առանձին շնորհս մատուցանեմք  
Հայրութեանդ : Կոյնպէս շնորհ ու-  
նիմք Հայրութեանդ , և համօրէն  
Վիանձանց քոց յաղագս քարոզու-  
թեանցն՝ յորս պարապիք մեծամեծ  
պտղովք . և ընդգրկեալ զամենեսին  
հայրական գթովք՝ տամք Հայրու-  
թեանդ , և համօրէն Վիանձանց քոց  
առաքինեաց զԱռաքելական օրհնու-  
թիւն , , :

Վ. Նորուն Վիխթարայ են յա-  
ւերժայիշատակ արդիւնք և ամենայն  
գրաւոր աշխատասիրութիւնք աշա-  
կերտաց նորա • որք և 'ի դիւրութիւն

անդուլ վաստակոց իւրեանց կառուցեալ Տպարան յամին 1789 ի մենաստանի իւրեանց (Է), և օրըստօրէ առաւելեալ յուսմունս՝ հասուցանեն ՚ի թիկունս օգնականութեան աղգի իւրեանց յոդնայոլով մատեանս՝ յօրինմամբ, և կամ թարգմանութեամբ :

Օ կնի մահուանն Մխիթարայ կալու զաթոռ Աբբայութեան նորա Մտեփաննոս Վարդապետ Մելքոնկեան Կոստանդնուպոլսեցի . և ապա յամին 1800 Երկրորդ Մտեփաննոս Վարդապետ Աղոնց Քիւվիրեան Շուրջովցի աղնուական ՚ի Պարանսիլվանիոյ, որ և յամին 1804 ձեռնադրեալ ՚ի Հռովմ Աբբեպիսկոպոս ցարդ վարէ զիշխանութիւն իւր Աբբայական և Եպիսկոպոսական ՚ի վերայ հպատակաց իւրոց :

Յաջորդք Մխիթարայ աճեցուցին զՄիաբանութիւնն, և առաւել ևս ոլայծառացուցին գիտութեամբք և

լեզուօք . և օր քան զօր առաւելուն  
զթարգմանութիւն , զյօրինումն , և  
զտպագրութիւն դրեանց : Խողեալ  
զքերականութիւնս և զբառարանս  
այլնայլ լեզուաց՝ յանցեալ ամի տպա-  
դրեցին զՔ.քոնիկոնն Խւսեբեայ Կե-  
սարացւոյ 'ի Հայ և 'ի Լատին բար-  
բառ հանդերձ Յունական հստուա-  
ծովք . գործ սնուանի յոյժ , և պի-  
տանի գիտնոց . զորոյ և զհայերէն  
հին թարգմանութիւնն ամբողջ գլ-  
տեալ յազգի իւրեանց՝ յեղին զայն  
'ի լատին բարբառ 'ի դիւրութիւն ու-  
սումնասիրացն Խւըոպայ :

Խողովեցին զբաղմութիւն ձեռա-  
գիր գրեանց Հայոց , և նոքօք զար-  
դարեցին , և զարդարեն միշտ զդրա-  
տուն իւրեանց . յոյր սակս և անուա-  
նի է նա . յորոց և զոմանսս տպագրեն  
երբեմն բաղդատութեամբ օրինակաց :

Գեղեցկութիւն և Շղութիւն Հայ-  
կական տպագրութեան առանձին իմն

փայլեն՝ ի տպարանի անդ սրբոյն Ա ա-  
զարու : Եւ գրեանքն տպագրեալք՝ ի  
նմա՝ առաքին միշտ Ա սիա՝ ի վաճառ .  
որով ոչ միայն ազգն Հայոց լուսաւո.  
ըեալ պայծառանայ , այլև միաբանու-  
թիւնն Ա խիթարայ մասամբ իմն նո-  
վաւ գտանէ զսլարեն իւր :

Ատացաւ նա զկնի մահուան հիմնա-  
դրի իւրոյ և զկալուածս գետնոյ՝ ի  
սահմանս Ա էնէտկոյ + որով դարձեալ  
գտանէ նա սակաւուք զեկամուտ իւր  
և ձրի դաստիարակէ զմանկունս : Բն-  
դունի դարձեալ և զշահ սակաւ դրա-  
մոցն եղելոց յառաջագոյն՝ ի փողերա-  
նոցի քաղաքին :

Արովչետեւ այս Ա խիաբանութիւն  
ոչ է՝ ի ծանրութիւն Տէրութեանն ,  
այլ յաւէտ օգտակար նմին՝ դրամովք,  
ծառայութեամբ , և պայծառացուցա-  
նելով զլլզին , յայն սակս և կառա-  
վարութիւն քաղաքին ընդ այլեայլ  
տէրութեամբք շնորհեաց նմա զաղա-

տութիւն գնելոյ և վաճառելոյ զգետինս , բանալոյ զտպարան , և այլն :

Յամին 1810 'ի բառնալ՝ Կաբուկունի զամենայն կըօնս և զմիաբանութիւնս յԱտալական տէրութեան անդ , ցուցին նմա զիրաւունս և զպիտանութիւն իւրեանց 'ի ձեռն փոխարքային յԱտալիոյ . և նորա հաւանեալընդ այն՝ առանձին վՃռով թողացոյց զմիաբանութիւն իւրեանց 'ի նոյն ամի 'ի 17. (Ծոստոսի :

Դեղեցկութիւն , մաքրութիւն և լուսափայլութիւն վանաց սրբոյն ՚ ազարու հանդերձնորոգ աւանդատամբ , և առանձին թանդարանաւ 'ի պէտա հայկական գրեանց , և ուսումնական գործեաց (երկոքին ևս շինեալ յամին 1816 արգեամբք յԱտփայէլեան Աղեքսանդրի հայկազուն յԱսպետի , և բարերարի յԻնաբանութեանն .) թող և զզուարձալի չըրեսին պարտէզմն որ 'ի նմա , հաճութիւն մեծ ընծայեն

օտարաց եկելոց հանապաղ՝ի զնին :

Յեկեղեցւոջ նորա՝ թողեալ զայլ  
ընտիր պատկերս, առանձին իմն ար-  
ժանի է տեսութեան պատկերն Աս-  
տուածածնի գաղափարեալ յլ միը  
Յովհաննիսէ՝ի Հռովմ՝ի բնագրէ  
անտի Ասսօֆերադօ մեծանուն նը-  
կարչի :

Դ գաւթի անդ եկեղեցւոյն գտա-  
նին առ որմովքն կրկին վայելուչ հին  
և նոր հանդիպահայեաց յիշատակա-  
րանք կամ դամբարանք : Հինն առանց  
թուականի ունի՝ի ներքոյ զայս լատին  
տապանագիր Գոթացւոց տառիւք .

Hoc probus, et sapiens ortus de prole  
Zuchola

Clauditur in Tumulo, cui Costantinus  
in Urbe

Nomen erat, Lazari Curator, amator,  
et almi

Compatiens inopum Domini sub honore  
Superni (†).

Իսկ նորն կանդնեալ յամին 1816 'ի  
նոյն հայկազուն Ասպետէ Ուաֆայէ-  
լեան՝ դատարկ է, և ունի 'ի վերայ  
գնորայն անուն Դրոշմեալ հայկական  
տառիւք :

'Ի սեղանատան ՚ի ճակատու անդ  
ընտիր է պատկեր ընթրեաց Տեառն  
նկարեալ 'ի Հռովմ 'ի Պետրոսէ 'ի օ-  
վելեան բաղադրութեամբ յօրինակաց  
անտի Ուաֆայէլի Ուրաբինացւոյ , և  
Լէննարդոսի Աինչեցւոյ :

'Ի մեծի գրատան անդ երեքին  
պատկերք ձեղուանն նկարք են Ֆը-  
րանչիսկոսի Ծունեան Աէնէտկեց-  
ւոյ . և են բաղմօք 'ի յարգի :

Յամին 1815 ինքնակալն Աւստրիոյ  
Ֆըրանչիսկոս յայցելութեան անդ 'ի  
կղզին Վ'խիթարեանց՝ տեսեալ զանձ-  
կութիւն նորա , թոյլ եաւ նոցա ընդ-  
արձակել զայն նոյնչափ ևս : Եւ նո-  
քա լցին զծովն առ հիւսիսակողմամբ  
կղզւոյն , և զտեղին առ այժմ կար-

գեցին 'ի պարտէզ կեղեցկաղուարձ։

Ոխաբանութիւնն Ոխիթարայ՝  
թէպէտե սակաւաթիւ է ցարդ, բայց  
ունի գրաւոր հաղորդութիւն ընդ հե-  
ռաւոր աշխարհս. և կարէ ևս բազ-  
մանալ առյապայս :

'Ե վերջին աւուրս յայսոսիկ ստա-  
ցաւ նա փոքրիկ վանատուն 'ի Հուվմ.  
և Պարոն Աամուել Ոկրտիչ Ուուրա-  
տեան հայաղգի՝ եթող կտակաւ ե-  
րեւելի գումար դրամոց, զի միջնոր-  
դութեամբ և կառավարութեամբ  
Ոխիթարեանց Աէնէտկոյ կանգնես-  
ցի յԱւրոպա ձրի դպրատուն 'ի նը-  
պաստ որբ և աղքատ մանկանց Հայոց:

ՅԱՆՈԹԱԽԹԻԿՆՔ

(Պ) Ուրբեն . Այբուբենարան , քերականութիւն , ճարտասանութիւն , սկզբունք ուսումնականութեան , լսախն քերականութիւն , փիլիսոփայութիւն , Աստուածաբանութիւն , բարոյական , աղօթագիրք , քրիստոնէական խոկումն , դիրք առաքինութեանց և մոլութեանց , քրիստոնէական կտառքելութիւն , քրիստոնէական վարդապետութիւն՝ 'ի գրաբառ , յաշխարհաբառ , և 'ի տաճկական բարբառ , հոգեորբական երգք և շարականք , մեկնութիւն Ժողովողի , և մեկնութիւն իմաստութեանն՝ զոր ոչ կարաց կտարել առ օրհասին կանխելոյ :

(Է) Զի յառաջագոյն բազում նեղութեամբ տպագրէին 'ի Վէնէտիկ քաղաքի :

(Ֆ) Խմաղեալ կայ 'ի դամբարանիս բարեպաշտ և իմաստունն կոստանդին Զուքողեան . ինեամակալու Ղաղարու , սիրող և վշտակից աղքատաց՝ 'ի պատիւ գերագոյն Տետոն բոլորեցունց :

COMPENDIOSE NOTIZIE  
SULLA CONGREGAZIONE  
DE' MONACI ARMENI  
MECHITARISTI  
DI VENEZIA

*NELL' ISOLA DI S. LAZZARO.*



TIPOGRAFIA  
DI SUDETTO ISOLA


---

1819





U. D. Lazzaro.  
Ludmilla.



CONGREGAZIONE  
MECHITARISTICA

---

VITA DEL FONDATORE.

**M**ECHITAR di Pietro Dottore Armeno Fondatore di questa Congregazione nacque in Sebaste città dell'Armenia Minore l'anno 1676.

Fu nella sua gioventù affidato alla cura di un Prete Armeno onde venisse educato ed istruito ne' primi elementi del sapere: e vi fece progressi maggiori alla sua età, manifestandosi inclinatissimo allo studio ed agli esercizj spiri-

tuali, anzichè ai giuochi fanciulleschi.

Nell'età di nove anni avendo spiegato un genio particolare per lo stato Ecclesiastico, ricevette li quattro Ordini Minori; e di anni quindici entrò in un Convento presso a Sebaste chiamato *del Santo Segno*, o *della Santa Croce*, per vestire le Monastiche divise.

Il Vescovo Anania Superiore di quel Convento osservando in esso una maturità di senno, e d'ingegno distinta, gli diede l'abito, ed ordinollo Diacono l'anno 1691.

Qui vi applicandosi ardentemente Mechitar alla divozione ed allo studio, intertennesi nella replicata ed attenta lezione di tutta la Sacra Scrittura, e di altre opere ascetiche, ed arricchì a dovizia di lumi la sua mente.

Compose in quel Convento alcune Poesie Sacre ed Omelie, amando di esercitarsi anche nella predicazione:

ma scorgendo che non poteva avanzarsi nella cognizione dell' altre scienze, partì di là accompagnandosi ad un Dottore Armeno d' Ecemiazin, Sede Patriarcale della Nazione Armena, che gli promise di condurlo colà come all' asilo ed al centro di tutte le scienze.

Viaggiando col suo Maestro, giunse in Erzerum città capitale dell' Armenia Maggiore, e ivi la prima volta vide un Missionario Europeo: cui fece domande intorno alle cose risguardanti gli Europei, e molte ne apprese con piacere, e profitto.

Arrivato in Ecemiazin, non vi rinvenne quella Università delle scienze che tanto bramava: perciò congedatosi dal suo Maestro, partì alla volta del Convento nell' Isola di Sevano, credendo di rimanervi soddisfatto. Ma siccome non gli avvenne di rilevare in quel sacro ritiro, che la stanza delle

penitenze più austere, così pensò di ritornare alla sua patria.

Viaggio facendo giunse al Convento di Passeno presso a Erzerum, e dietro le istanze di quel Superiore vi si fermò alcun tempo, e tenne scuola alla gioventù. Trascorsi dieci nove mesi in tal esercizio recossi in Erzerum, e si abbattè in un Armeno Signore recentemente tornato dall'Europa, il quale gli fece parecchi racconti delle regioni occidentali. Mechitar si accese a questi di nuove voglie, e cercava l'opportunità di passare in Europa.

Trovò nella casa di quel Signore i libri di Clemente Galano Teatino, e ne raccolse le notizie al suo bisogno più convenevoli.

Nell' anno 1695 giunto a Sebaste si ritirò di bel nuovo nel Convento di S. Croce, e si diede alla più attenta lettura delle opere dei Padri Armeni, non

che di quelle dei Padri Greci e Siriaci in lingua Armena tradotte. Tanto era il suo amore pello studio, che anche in viaggio non trascurava le sue lezioni. Non gli sfuggiva di mano un libro finchè non l'avesse letto per intiero, e con matura attenzione penetrato.

